

<https://doi.org/10.46991/hc.2022.18.2.125>

The use of Copper Trays Inhousehold in Armenia XIX -XX Centuries

Mery Avetisyan

<https://orcid.org/0000-0002-7351-4147>

*Museum of the History of the city of Yerevan, A senior research employee
meryavetisyan1984@gmail.com*

Keywords: copper tray, meal, tradition, table, traditional way of life, floral pattern, inscription, folk beliefs, the Ethnographic Museum of Armenia.

Summarizing the topic and our research, on the tray, it should be noted that the trays are considered as unique examples of the Armenian culture both from an aesthetic point of view and from that of view of functional significance in everyday life.

In addition to the meaning of their daily use, the phenomenon of their ritualism, which was especially characteristic of the traditional life, is very interesting.

The rich ornament adorning the trays had a peculiar symbolic meaning and a meaning of the amulet.

As for the cultural and everyday value of the trays, which was directly related to the cultural characteristics of the given historical and ethnographic region, we can say that in each period it had different manifestations, the least studied of which is the custom of giving a tray as a gift. So i think it needs a particular research.

Պղնձե սկուտեղների կենցաղավարումը Հայաստանում (XIX-XX րդ դդ.)

Մերի Ավետիսյան

Երևան քաղաքի պատմության թանգարան , ավագ գիտախշատող

Հիմնաբառեր՝ պղնձե սինի, հացկերույթ, ավանդույթ, սեղան, ավանդական կենցաղ, բուսանախշ, արձանագրություն, ժողովրդական հավատալիքներ, Հայոց ազգագրության թանգարան:

Ամփոփելով թեման և մեր քննարկման առարկա սկուտեղի ուսումնասիրությունը՝ հարկ է անրագրել, որ սկուտեղները թե՛ գեղագիտական, թե՛ կենցաղում ունեցած գործառնության նշանակությամբ հայկական մշակույթի յուրատիպ նմուշներ են: Բացի կենցաղային կիրառական

History and Culture. Journal of Armenian Studies, Vol.-2(18), 2022, pp. 125-134



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Received: 26.09.2022

Revised: 14.12.2022

Accepted: 25.12.2022

© The Author(s) 2022

նշանակությունից՝ շատ հետաքրքիր է դրանց ծիսականացման երևույթը, ինչը բնորոշ է եղել հայկական ավանդական կենցաղին:

Յուրատիպ խորհրդարանություն և չարխափան նշանակություն են կրել հարուստ զարդամոտիվները, որոնցով հարդարվել են սկուտեղները: Ինչ վերաբերում է սինիների կենցաղավարման մշակույթին, որն անմիջականորեն կապված է եղել պատմագագազրական տվյալ շրջանի մշակութային առանձնահատկությունների հետ, կարող ենք ասել, որ դրանք ժամանակաշրջանին զուգահեռ տարբեր դրսևորումներ են ունեցել, որոնցից ամենաքիչ ուսումնասիրվածը սկուտեղը որպես ընծա մատուցելու սովորույթն է, ինչն առանձին հետազոտության արարկա է:

Бытование медных подносов в Армении XIX-XX вв.

Мери Аветисян

Музей истории города Еревана, старший научный сотрудник

Ключевые слова: медный поднос, трапеза, традиция, стол, традиционный быт, цветочный узор, надпись, народные поверья, Этнографический музей Армении.

Обобщая тему и наше исследование, предметом которого является поднос, следует отметить, что подносы считаются уникальными образцами армянской культуры как с эстетической точки зрения, так и с точки зрения функционального значения в быту.

Помимо бытового прикладного значения очень интересно явление их обрядовости, которая была особенно характерна для традиционного быта.

Своеобразное символическое значение и значение оберегов имел богатый орнамент, которым украшались подносы.

Что касается культурно-бытового значения подносов, которое было непосредственно связано с культурными особенностями данной историко-этнографической провинции, то можно сказать, что оно в каждый период имело различные проявления, наименее изученным из которых является обычай приносить поднос в дар, который, полагаем, нуждается в отдельном изучении.

* * *

Պղնձե սկուտեղները սպասքի համալիրի մաս կազմող տարրեր են և հայոց ավանդական կենցաղում ամենակիրառվող սպասքի տեսակներից են: Հոդվածում փորձ է արվել ներկայացնելու դրանց կիրառական ու ծիսական նշանակությունը, զարդամոտիվների խորհրդարանական վերլուծությունը: Ուսումնասիրությունը կատարվել է Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի պղնձե սկուտեղների հավաքածուի հիման վրա: XVIII-XX դարերով թվագրվող հավաքածուն ընդգրկում է շուրջ հարյուր նմուշ, որոնք թանգարանը ձեռք է բերել ազգագրական գիտարշավների, գնման, նվիրատվությունների արդյունքում: Քննարկվող հավաքածուի նմուշ հանդիսացող սկուտեղների մեծ մասը կենցաղավարված են Հայաստանի տարբեր պատմագագազրական շրջաններում, որոնք պատրաստված են կուման, իսկ արտաքին

գեղագարդումները կատարված են փորագրման, դրվագման արհեստագործական եղանակներով: Հողվածի նպատակներն են թանգարանային նյութի ուսումնասիրությունն ու հանրահռչակումը, հայկական ավանդական կենցաղին բնորոշ ավանդույթների, մասնավորապես սկուտեղների կենցաղավարման հետ կապված առանձնահատկությունների տիպաբանումը՝ ըստ պատմագագարական շրջանների: Ամփոփ անդրադարձ է կատարվել նաև սկուտեղների ծեսերի ժամանակ դրանց կիրառման արդիականացումներին:

Հայոց ավանդական կենցաղում պղնձե սկուտեղների լայն կիրառելիության մասին վկայում են գրականության մեջ հանդիպվող հացկերույթի տեսարանների նկարագրերը՝ կառուցված կերակուրներով լի պղնձե բոլորակ սինիների, փսե-մատուցարանների շուրջ, որոնք դրվել են գորգերի, մորթե կամ հյուսածո փռոցների վրա (Բաֆֆի, 1963, 244; Պոռշյան, 1964, 473-474):

Առօրյա խոսույթում ու գրավոր աղբյուրներում հավասարաչափ կիրառվում են «սինի», «սկուտեղ», «մատուցարան» բառերը, որոնք հոմանիշ բառեր են, ընդգրկված են հայերենի բառային կազմում, և՛ բանավոր, և՛ գրավոր խոսքում հավասարաչափ ընդունելի են (Գյուրջիյան Դ., 17.02.2021): Հողվածում նախընտրել ենք «սինի», «սկուտեղ», «փսե-մատուցարան» բառերի կիրառումը՝ ելնելով դրանց՝ կենցաղում ունեցած գործառույթային նշանակությունը ճիշտ ներկայացնելու անհրաժեշտությունից: Իրի գործառույթային նշանակությունը հնարավորինս հստակեցնելու նպատակով, ստորև փորձ է արվել ներկայացնելու նաև բառերի ստուգաբանությունը, ինչպես նաև բարբառային տարբերակները:

Ըստ Հ. Աճառյանի ստուգաբանության՝ «սինի» բառը պարսկերենից փոխառյալ բառ է և պահլավերենից թարգմանաբար նշանակում է «պղնձե մեծ փսե» (Աճառյան, 1926, 215-216): «Սկուտեղը» փոխառություն է լատիներենի scutella բառից, որը նշանակում է «սկավառակաձև մատուցաման, փսե» (Մուքիսյան, 1967, 580): Գրաբարյան խոսույթում հանդիպվում է նաև «խան» (Հովհաննիսյան, 2000, 78) բառը, որն իրանական փոխառություն է և իմաստային առումով հոմանիշ է «փսե», «սինի» բառերին: Նոր Բայազետում, Մոկսում, Վանում, Խարբերդում ընդունված է եղել նաև «սենի» բառի գործածությունը, իսկ «սինի դնել», «սինի նստիլ» արտահայտությունները Մեբաստիայում կիրառվել են «ճաշի սեղան պատրաստել», «հացի սեղան նստել» իմաստներով (Հայոց լեզվի բարբառային բառարան, 2008, 329): Մեղրեցիների ավանդույթի համաձայն՝ Նավասարդին հարսնացուի ընտանիքին ուղարկվելիք զինու գավով, օղու շշով, մրգերով լի և վառվող մոմերով զարդարված պղնձե սինին կոչվել է *մեծմահի* (Պողոսյան, 2004, 122):

Հայոց ազգագրության թանգարանի պղնձե սկուտեղների հավաքածուի և գրավոր նյութի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայոց կենցաղում IX-XIII դարերում գործածության նպատակով պղնձագործ վարպետների պատրաստած առարկաների մեջ գերակշռել են սկուտեղները (Առաքելյան, 1958, 166): Արդեն XIX-XX դարերում սինին, պահպանելով կիրառական նշանակությունը, պատրաստման ձևի, գեղագարդման բազմազանության ու եղանակների կիրառելիության տեսանկյունից՝ հասել է կատարելության:

Ավանդական կենցաղում սկուտեղները՝ որպես խոհանոցային սպասքի տարրեր, օգտագործվել են կերակուրը մատուցելու նպատակով, իսկ ավելի մեծ տրամագծով (55-90 սմ) սկուտեղները ծառայել են որպես սեղաններ, որոնց շուրջ կազմակերպվել են հացկերույթներ ու հյուրասիրություններ: Պղնձե սկուտեղների կիրառումը կենցաղում ենթադրում էր որոշակի սոցիալական կարգավիճակ: Դրանց շուրջը ճաշում էին տան ավագ տղամարդիկ կամ

պատվավոր հյուրերը: Ջավախքում սեղան մատուցարանների շուրջը ճաշում էր 2-4 մարդ՝ տղամարդիկ ու կանայք առանձին-առանձին (Բդոյան, 2014, 203): Մուսալեռցիների կենցաղում Անտիոքի վարպետների կողմից պատրաստված և կլայեկված սեղան-մատուցարանների շուրջ կազմակերպված հյուրասիրությանը կանայք ու երեխաները չէին մասնակցում, եթե հյուրերի հետ որևէ ազգակցական կապ չէին ունենում (Գյոզալյան, 2001, 123): Սեղան-մատուցարանները դրվում էին հատակին՝ փոռների կամ փայտե կարճ ոտքերով, շրջանաձև կամ ուղղանկյունաձև սեղանների վրա: Այսպիսի սեղանները նախատեսված էին նաև խմորի գնդերը գրտնակելու համար (Марутян, 2012, 25): Մեծ մատուցարանները որպես ճաշի սեղան օգտագործելու մշակույթը հայ ժողովրդի կենցաղում պահպանվել է մինչև XIX դարավերջ: Փոքր և միջին չափի (25-50 սմ) սկուտեղ-ափսեները օգտագործվել են քաղցրավենիք ու միրգ մատուցելու նպատակով (Աբրահամյան, 1975, 19): Ըստ բանասացի (Սարգսյան Ս., 12.11.2021) փոխանցած տեղեկությունների՝ Մեղրու շրջանում պղնձե սինիները կենցաղի անբաժանելի մաս են կազմել: Հատկապես չրերով, հավվայով, աղանձով լի պղնձե սինին անպակաս է եղել թեյախմության սեղաններից, իսկ պատվավոր հյուրերի հյուրասիրությունը կազմակերպվել է սպիտակ սփռոցների վրա դրված մեծ պղնձե սինիների շուրջ որպես հյուրի նկատմամբ առանձնահատուկ վերաբերմունքի դրսևորում: Պղնձե փոքր չափերի (25-45 սմ) ափսեներ օգտագործվել են նաև եկղեցիներում, բայց դրանք չեն դասվել եկղեցական սպասքի կարգին, այլ օգտագործվել են անհրաժեշտության դեպքում: Եկղեցական արարողությունների ժամանակ ձեռքի խաչերը դրվել են սկուտեղ-ափսենների վրա՝ հանդիսադրին մատուցելու համար: Ամենափոքր չափեր ունեցող (20-35 սմ) սկուտեղ-ափսենները, որոնց վրա դրվել է նաև նշխարքը, սկիհի համար որպես խուփ են ծառայել և ունեցել են հատուկ անվանում՝ մաղզմա (Օրմանյան, 1992, 118): Այս բառը, որն ասորական փոխառություն է, գործածվել է բացառապես եկղեցու կամ տաճարի ափսե նշանակությամբ (Հովհաննիսյան, 2000, 78):

Հայոց ավանդական ծիսաշարերում, մասնավորապես հարսանեկան արարողությունների ժամանակ պղնձե սկուտեղները լայնորեն կիրառվել են առանձին դեպքերում նաև ծիսականացվել են: Ավանդության հասարակությունում «հալավօրհների» (ամուսնացող զույգի հանդերձը օրհնելու կարգ) և «հինադրեքի» (հարսնացուի ձեռքերը հինա դնելու նախահարսանեկան արարողություն) ձեռքի ժամանակ օգտագործվել են պղնձե սկուտեղներ, որոնց եզրին խորհրդանշական զույգ մոմեր են վառվել (Պետոյան, 2014, 246)՝ կապված նորապսակների լուսավոր ապագայի ու զույգ մնալու գաղափարի հետ: Մուսալեռցիների ավանդույթի համաձայն՝ նորահարսը շեմն անցնելիս նախօրոք կանգնում էր դռան առջև դրված մեծ սկուտեղի վրա, որը հարսի հետ միասին երեք անգամ պտտեցնում էին՝ ասելով. «Կոխեց սկուտեղին, դարձավ մեր հավատին», այսինքն՝ հարսին յուրային դարձնելու արարողակարգ է համարվել:

Ընդունված կարգ է եղել նաև, որ տոների ժամանակ նոր խնամիացած ընտանիքները միմյանց անուշեղեններով լի սիններ ուղարկեին: Դրանք կոչվել են խոնչաներ (Աղայան, 1976, 594, Աճառյան, 1972, 549): Արդեն խորհրդային շրջանում նշանդրեքի և հարսանյաց արարողությունների ժամանակ հարսի տուն տարվող նվերները մեծ, էմալապատ, ծաղկանկար սինիների վրա էին ձևավորվում, և հարսի տան մուտքի մոտ սինիները պարեցնելու արարողակարգից հետո ներս էին տանում: Աղջկա ընտանիքը սինիները դատարկ չէր վերադարձնում, այլ նախօրոք գնած, փաթեթավորած նվերներով: Ընդունված կարգ է եղել նաև նմանատիպ սինիներ չունենալու դեպքում հարսանքատիրոջ կողմից հարսաններից կամ

բարեկամներից փոխառությամբ վերցնելը: Ժամանակակից հարսանեկան ծեսում սինիները փոխարինվել են հարսանեկան ծառայություններ մատուցող կազմակերպությունների կողմից առաջարկվող հատուկ զամբյուղներով կամ տուփերով, որոնց ժողովուրդը դեռ շարունակում է ընդհանրական «սինի» անվանել:

Պղնձե սկուտեղները, բացի կենցաղում ունեցած կիրառական նշանակությունից, այժմ են ընկնում զարդամոտիվների ճոխությամբ ու բազմազանությամբ: Եթե սկուտեղները դիտարկենք զուտ արհեստագործական տեսանկյունից, ապա ուսումնասիրությունները վկայում են, որ դեռևս IX դարի երկրորդ կեսին պղնձագործությունը բավականին զարգացած արհեստ էր միջնադարյան Հայաստանում (Առաքելյան, 1958, 153), որտեղ կոման, դրվագման, դրոշման, ձուլման եղանակներով ստանում էին տեխնիկապես կատարելագործված իրեր, որոնց վրա փորագրված զարդանախշերը լրացուցիչ գեղագիտական հմայք էին տալիս պղնձե առարկաներին՝ դրանք վերածելով մշակութային բարձրարժեք նմուշների: Ասվածի հիանալի օրինակներ են Մարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության թանգարանում պահպանվող ու ցուցադրվող պղնձե սկուտեղները, որոնց մակերեսին առկա զարդագոտիները հազեցած են բուսական, երկրաչափական զարդամոտիվներով: Ի դեպ զարդամոտիվների այս պատկերագրությունը հաճախադեպ է փորագրագարդ սպասքի նմուշների վրա, ինչը հավանաբար կապվում է դեռևս հեթանոսական շրջանից եկող բնապաշտական ու տոտեմական հավատալիքների հետ: Բուսական հարուստ մոտիվները, որոնք բնորոշ են երկրագործ ժողովուրդների հավատալիքներին, կապվում են պտղաբերության, կյանքի շարունակելիության հետ, և բոլորվին պատահական չէ, որ ակնհայտորեն ընդգծվում են վարսանդապտղային պատկերները, սերմերը, ինչը նույնականացվում է ծննդի գաղափարի հետ: Առհասարակ հայկական զարդարվեստում ցանկացած բուսական մոտիվ խորհրդանշականորեն նույնականացվում է կենաց ծառի գաղափարի հետ (Մնացականյան, 1955, 2): Անասնապահական և երկրագործական կենսակերպ ունեցող ժողովուրդների աշխարհընկալումներին բնորոշ են նաև բնության չորս ուժերի՝ հողի, ջրի, օդի, արևի խորհուրդը արտահայտող հայկական զարդարվեստին բնորոշ մի շարք մոտիվներ՝ քառակուսիներ, ռոմբեր, եռանկյունիներ, քառաթև զարդեր, չորս մասի բաժանված գնդեր (Մնացականյան, 1955, 207): Պղնձե սկուտեղների հարդարանքը արվեստաբանական վերլուծության է ենթարկել արվեստաբան Ս. Դավթյանը՝ վերջիններս համեմատելով հայկական ժանյակի հետ և նշելով, որ սկուտեղների զարդանախշերի համակենտրոն դասավորությունը բնորոշ է հայկական ժանյակին, իսկ սևով լցված փորագրագարդ գծերը զարդանկարների շարքեր են ստեղծում, որոնք շատ նման են ծակոտկեն ժանյակների (Դավթյան, 1966, 10): Բացի զարդամոտիվներից՝ սկուտեղների վրա առանձնահատուկ ուսումնասիրության են արժանի արձանագրությունները, որոնց վերձանումը հարուստ տեղեկատվություն է փոխանցում, իրի օգտագործման նպատակի, ժամանակաշրջանի, վայրի մասին: Այդպիսի մի փորագրագարդ ու արձանագրություններով հարուստ պղնձե սինի ցուցադրվում է Հայոց ազգագրության թանգարանի ազգագրությանը նվիրված մշտական ցուցադրությունում: Թանգարանը սինին ձեռք է բերել (գնում 30ռ.) 1985 թ. Մեղրիի հայոց ազգագրության թանգարանի կողմից կազմակերպված ազգագրական գիտարշավի արդյունքում: Այն գիտարշավի մասնակիցներին հանձնել է հայագետ, ծագումով մեղրեցի Կարապետ Մելիք-Օհանջանյանի քույրը՝ Անահիտ Օհանջանյան-Մեծյունյանը: XIX դարով թվագրվող պղնձե սինին կողային հատվածներում ունի երկու արձանագրություն՝

հետևյալ բովանդակությամբ. «ԳՐԵՅԻՄ ՔՄԻ ԾԱՌԱՅ. ՅՈՂԱՆՆԷՍ ԳՐԻԳՈՐԵԱՆՑ ՇՆՈՐՀԻ» «ՈՐ Է ԱՅՍ ԶԱՔԱՐԵԱՆՑ Ի ՄԵՂՐԻ»: Մինու կենտրոնական հատվածում ևս կա արձանագրություն՝ հետևյալ բովանդակությամբ. «Ի ՎԱՅԵԼԱՄՆ ԳՐԻԳՈՐ ՄԵՐԱՆՂՈՒԼԵԱՆՑԻ 1863 Ա.Ի ԴԷԿՏԵՄԲԷՐԻ 30ԻՆ»: Առհասարակ սպասքի վրա նման բովանդակություն ունեցող արձանագրությունները վկայում են այն մասին, որ սպասքը, այս դեպքում՝ սկուտեղը, ինչ-որ առիթով ընծայվել է ում Մերանդուլեանցի: Հայաստանի ազգային արխիվում պահվող Մեղրիի Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցու չափաբանական գրանցամատյանների ուսումնասիրությամբ պարզ դարձավ, որ 1800 թ. նույն եկեղեցու քահանան եղել է սկուտեղի կողային հատվածների արձանագրության մեջ նշված Գևորգ Տեր-Գրիգորյանցը (Գրիգորյան), իսկ վարդապետը՝ Հովհաննեսը (ՀԱԱ, ֆ.47, ց.7, թ. 706): Հարկ է նաև նշել, որ եկեղեցին ընդգրկված է եղել Նախիջևանի թեմում և Գողթն գավառից եկող ուխտավորների համար ուխտատեղի է եղել (Հայրապետյան Ն., 3.12.21): Սկուտեղին առնչվող ուսումնասիրությունները հետաքրքիր շրջափուլի մեջ մտան, երբ սկսեցինք հարցումները Սյունիքի մարզի Մեղրի քաղաքի Փոքր թաղի (որտեղից բերվել էր սկուտեղը) բնակիչներից: Հարցումների արդյունքները տարան 1829-1830-ական թթ., երբ Իրանի հայաբնակ Մուժամբար գյուղից ներգաղթյալների հետ Մերանդուլիները¹ (Աճառյան, 1946, 322, Աղայան, 1976, 931) եկել և հաստատվել են Գորիսում, այնուհետև՝ 1800-ական թթ. կեսերին՝ տեղափոխվել Մեղրու շրջանի Գուդեմնիս գյուղ (Բոլյան Ն., 7.12.21): Մելիք-Օհանջանյաններից սերված իշխանական հայտնի տոհմի ներկայացուցիչներ են եղել Մերանդուլիները, և ենթադրվում է, որ նրանց կողմից Մեղրիի Փոքր թաղի Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցուն արված հանգանակություններին ի պատասխան՝ եկեղեցին որպես երախտագիտություն նվիրել է սինին: Բացի արձանագրություններից՝ սինին աչքի է ընկնում փորագրման եղանակով արված հարուստ զարդանախշերով: Շրջագծերում առնված, ծաղկած խաչ հիշեցնող հորինվածքին հաջորդում է բուսանախշ զարդագոտին: Երկրորդ՝ ավելի լայն զարդագոտին, որը հարդարված է ալիքաձև ժապավեն հիշեցնող զարդագոտիով, աչքի է ընկնում ոճավորված կենսաց ծառերի ու նշիկաձև հորինվածքների՝ իրար հաջորդող կանոնիկ դասավորությամբ շարքով: Առկա զարդամոտիվների խորհրդաբանությունը կապվում է պտղաբերության գաղափարի հետ, որի հիմքում ընկած են բնապաշտական հավատալիքները:

¹ **Մերանդուլ** արական անձնանունը ծագում է պարսկերեն miran-gul բառից և թարգմանաբար նշանակում է «իշխանների վարդ»: Հետագայում «Մերանդուլ» բառից առաջացել է Կովկասում տարածված Մերանդուլյան ազգանունը (Աճառյան, 1946, 322): Իսկ «ղուլի» պահլավերենից թարգմանաբար նշանակում է «ծառ», «մերանդուլի»՝ «տիրոջ ծառ» (Աղայան, 1976, 931):



Նկ. 1. Պղնձե սկուտեղ (Մեղրի, XIX դ., ՀԱՊԹ հավաքածու)



Նկ. 2. Պղնձե սկուտեղ (Տավուշ, XIX դ., ՀԱՊԹ հավաքածու)



Նկ. 3. Պղնձե սկուտեղ (Սյունիք, XIX դարավերջ, ՀԱՊԹ հավաքածու)



Նկ. 4. Պղնձե սկուտեղ (Իջևան, XX դ., ՀԱՊԹ հավաքածու)



Նկ. 5. Պղնձե սկուտեղ (Մեղրի, XIX դարավերջ, ՀԱՊԹ հավաքածու)



Նկ. 6. Պղնձե սկուտեղ (Արևմտյան Հայաստան, XVIII դար, ՀԱՊԹ հավաքածու)

Գրականության ցանկ

Աբրահամյան Վ. (1956), Արհեստները Հայաստանում IV-XVIII, Երևան, հրատ. Հայկական ՍՍՌ ԳԱ:

Աբրահամյան Վ. (1975), XV դարի մի եզակի սկուտեղ, Աշխատություններ Հայաստանի պետական պատմական թանգարանի VI, Երևան, «Հայաստան» հրատ., էջ 17-31:

Առաքելյան Բ. (1958), Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII դդ., Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ.:

Աղայան Է. (1976), Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 2, Երևան, «Հայաստան» հրատ.:

Աճառյան Հ. (1946), Հայոց անձնանունների բառարան, հ. 3, Երևան, ԵՊՀ հրատ.:

Բդոյան Վ. (1974), Հայ ազգագրություն, Երևան, Հայաստանի համալսարանի հրատ.:

Բդոյան Վ., (2014), Ջավախքի հայոց ազգագրությունը և ժողովրդական բանավեպերը, Երևան, ԵՊՀ հրատ.:

Գյոզալյան Գ. (2001), Մուսա լեռան ազգագրությունը, Երևան, «Գիտություն» հրատ.:

Դավթյան Ս. (1966), Հայկական ժանյակ, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ.:

Հակոբյան Ն. (1981), Միջնադարյան Հայաստանի գեղարվեստական մետաղը IX-XIII դդ., Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ.:

Հովհաննիսյան Լ. (2000), Կենցաղային իրերի իմաստային խմբի բառերը գրաբարում, «Բանբեր Երևանի համալսարանի» 3(102), Երևան, ԵՊՀ հրատ., էջ 77-83:

Մնացականյան Ա. (1955), Հայկական զարդարվեստ, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ.:

Նահապետյան Ռ. (2004), Աղձնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը, Երևան, ԵՊՀ տպարան:

Պետոյան Վ. (2014), Սասունի ազգագրությունը, Երևան, «Լուսակն» հրատ.:

Պողոսյան Ս. (2004), Մեղրու ավանդական տարազի տոնածիսական համալիրը, Հայ ժողովրդական մշակույթ 12, Երևան, «Մուղնի» հրատ., էջ 98-122:

Սուքիասյան Ա. (1967), Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ.:

- Օրսանյան Մ. (1992), Ծիսական բաժարան, Երևան, «Հայաստան» հրատ.:
- Марутян А. (1989), Интерьер армянского народного жилища (вторая половина XIX- начало XX в.), Ереван, Издательство АН Армянской ССР.
- Марутян А. (2012), Поселения и жилища, АРМЯНЕ, Москва, ред. Москва наука, стр. 205-233.

References

- Abrahamyan V. (1956), Arhestnerë Hayastanum IV-XVIII, Erewan, hrat. Haykakan SSR GA: (in Armenian)
- Abrahamyan V. (1975), XV dari mi ezaki skutegh, Ashkhatut'yunner Hayastani petakan patmakan t'angarani VI, Erewan, «Hayastan» hrat.,ēj17-31: (in Armenian)
- Acharyan H. (1946), Hayots' andznanneri baṛaran, h. 3, Erewan, EPH hrat.: (in Armenian)
- Aghayan Ē. (1976), Ardi hayereni bats'atrakan baṛaran, h. 2, Erewan, «Hayastan» hrat.: (in Armenian)
- Aṛak'elyan B. (1958), K'aghak'nerë ew arhestnerë Hayastanum IX-XIII dd., Erewan, Haykakan SSR GA hrat.: (in Armenian)
- Bdoyan V. (1974), Hay azgagrut'yun, Erewan, Hayastani hamalsarani hrat.: (in Armenian)
- Bdoyan V. (2014), Javakhk'i hayots' azgagrut'yunë ew zh'oghovrdakan banarvestë, Erewan, EPH hrat.: (in Armenian)
- Davt'yan S. (1966), Haykakan zh'anyak, Erewan, Haykakan SSR GAA hrat.: (in Armenian)
- Gyozalyan G. (2001), Musa leṛan azgagrut'yunë, Erewan, «Gitut'yun» hrat.: (in Armenian)
- Hakobyan N. (1981), Mijnadaryan Hayastani gegharvestakan metaghë IX-XIII dd., Erewan, Haykakan SSH GA hrat.: (in Armenian)
- Hovhannisyan L. (2000), Kents'aghayin ireri imastayin khmbi baṛerë grabarum, «Banber Erewani hamalsarani» 3(102), Erewan, EPH hrat., ēj 77-83: (in Armenian)
- Maputjan A. (1989), Intjep'jep apmjanskogo napodnogo zhilish'a (vtopaja polavina XIX- nachalo XX v.), JEpjevan, Izdatjel'stvo AN Apmjanskoj SSP. (in Russian)
- Maputjan A. (2012), Posjeljenija i zhilish'a, APMJANJE, Moskva, pjed. Moskva nauka, stp. 205-233. (in Russian)
- Mnats'akanyan A. (1955), Haykakan zardarvest, Erewan, Haykakan SSR GA hrat.: (in Armenian)
- Nahapetyan R. (2004), Aghdznik'ahayeri ěntanik'ë ew ěntanekan tsisakargë, Erewan, EPH tparan: (in Armenian)
- Örmanyan M. (1992), TSisikan baṛaran, Erewan, «Hayastan» hrat.: (in Armenian)
- Petoyan V. (2014), Sasuni azgagrut'yunë, Erewan, «Lusakn» hrat.: (in Armenian)
- Poghosyan S. (2004), Meghru avandakan tarazi tonatsisikan hamalirë, Hay zh'oghovrdakan mshakuyt' 12, Erewan, «Mughni» hrat., ēj 98-122: (in Armenian)
- Suk'iasyan A. (1967), Hayots' lezvi homanishneri baṛaran, Erewan, Haykakan SSH GA hrat.: (in Armenian)